

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵԼԵԿԱԳԻՐ  
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

---

Հասարակական գիտություններ

№ 4, 1965

Общественные науки

**Ա.Կազեմիկոս Վ. Հ. Համբարձումյան**

**Ե Ղ Ե Ռ Ն Ե Վ Վ Ե Ր Ա Ծ Ն ՈՒ Ն Դ\***

Հարգելի ընկերներ: Այսօր մենք հավաքվել ենք այս դահլիճում հարգելու 1915 թվականի եղեռնի զոհերի հիշատակը և նշելու Հոկտեմբերյան մեծ հեղափոխության շնորհիվ կատարված հայ ժողովրդի այն հոյակապ և հրաշալի վերածնունդը, որի վկաներն ենք բոլորս:

Կես դար է անցել այն օրից, երբ սուլթանական Թուրքիայի գաղութարարները անցան վաղօրոք նախապատրաստված իրենց ծրագրի իրականացմանը: Նրանք սկսեցին ցեղասպանության հրեշավոր գործը՝ հայ ժողովրդի բնաջնջումը Արևմտյան Հայաստանում:

Պատմությունը մարդկության անցյալի էջերում արձանագրել է անհամար պատերազմներ, կոտորածներ և ժողովրդական զանգվածների հալածման ու տեղահանման բազմաթիվ դեպքեր: Մարդ հուզվում է, երբ կարդում է այդ ողբերգությունների մասին, երբ պատկերացնում է անթիվ ընտանիքների տանջանքներն ու դժբախտությունները:

Սակայն միայն իմպերիալիզմի ժամանակաշրջանը մտցրեց մեր բառարանի մեջ համատարած աղետների այն նոր, զարհուրելի տեսակը, որը կոչվում է գենոցիդ և որը նշանակում է տվյալ երկրում մի ամբողջ ժողովրդի, մի ամբողջ ազգի ծրագրված, նախապես մտածված լիակատար ոչնչացում:

Եվ իմպերիալիզմի կողմից կիրառվող գենոցիդի առաջին օրինակը ցույց տվեց այն ժամանակվա թուրքական կառավարությունը, որն իր բարբարոսական նպատակները իրագործելու համար սերտ դաշինքի մեջ էր մտել կայգերական Գերմանիայի հետ:

1915 թվականի ապրիլին Իթթիհատ կուսակցության որոշումով և թուրքական կառավարության հրամանով սկսվեց Արևմտյան Հայաստանի ժողովրդի մեծ կոտորածը: Արևմտյան Հայաստանը, 1915 թվականի ընթացքում, ամբողջապես դատարկվեց հայերից, եթե չհաշվենք բնակչության այն փոքր տոկոսը, որը փրկվեց մահվան վտանգից՝ հասնելով ռուսաց զորքի դիրքերին, և չհաշվելով Վանը, որը ազատագրվեց շնորհիվ համաժողովրդական հերոսական ինքնապաշտպանության, որը ծաղեց կոտորածի անխուսափելի սպառնալիքի պատճառով:

19-րդ դարի ընթացքում սուլթանական Թուրքիան իր իշխանության ներքո գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի հետևանքով կորցրեց իր գաղութների մեծ մասը: Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Սերբիայի ժողովուրդները ռուս ժողովրդի մեծ օգնությամբ դուրս վռնդեցին թուրք գաղութարարներին ու վերածվեցին անկախ պետությունների:

\* Զեկուցում՝ կարդացված 1965 թ. ապրիլի 24-ին, Երևան քաղաքի Հասարակայնության ներկայացուցիչների նիստում՝ նվիրված 1915 թ. եղեռնի զոհերի հիշատակին:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին ծավալվում է հայերի և արաբների ազատագրական պայքարը: Թուրքիայի ղեկավար շրջանները սարսափով էին դիտում պատմական զարգացման անխուսափելի ընթացքը: Ճշմարտությունը, անվերջ հալածանքները և մինչև անգամ Աբդուլ Համիդի կողմից կազմակերպված կոտորածները տալիս էին միայն հակառակ արդյունք: Ճնշված ժողովուրդների ձգտումը դեպի ազատություն ավելի ուժեղանում էր: Այդ պայմաններում Թուրքիայի կառավարող շրջանները տենդորեն փնտրում էին մի ելք Օսմանյան կայսրությունը քայքայումից փրկելու համար:

Այսպես, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին երիտասարդ թուրքերի կուսակցության վերնախավում ծագեց ու մանրամասն մշակվեց Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի վերջնական ու լիակատար բնաջնջման գաղափարը: Ենթադրվում էր նաև, որ Թուրքիան պատերազմի ընթացքում կգրավի Անդրկովկասը: Հասկանալի է, որ այս վերջին ծրագրի հասող իրագործման դեպքում պետք է ոչնչացվեր նաև Արևելյան Հայաստանի բնակչությունը: Սակայն թուրքական բանակի խայտառակ պարտությունը Սարիղամիշի ճակատամարտում թույլ չտվեց թուրքական կառավարությանը՝ էնվերին, Թալիաթին ի կատար ածել իրենց նախագծումները Արևելյան Հայաստանի նկատմամբ:

Թուրքիայի ղեկավարները որոշեցին արագացնել գենոցիդի իրականացումը Արևմտյան Հայաստանում:

Պատերազմի առաջին ամիսներին գորակոչի անվան տակ և բանվորական ջոկատներ ստեղծելու պատրվակով բանակ կանչեցին 20—50 տարեկան հայ սղամարդկանց, որոնց 1915 թվականի սկզբներից աստիճանաբար զինաթափ արեցին և փոքր խմբերով գաղտագողի կոտորեցին:

Կովելու և դիմադրելու ընդունակ մարդկանց մեծ մասին այսպիսի խարդախ միջոցներով ոչնչացնելուց հետո, երիտասարդ թուրքերն անցան անպաշտպան բնակչության՝ երեխաների, կանանց ու ծերունիների զանգվածային բնաջնջմանը: Իրենց այդ մեծ ոճիրը փորձեցին ներկայացնել որպես սովորական «տեղահանություն» և աքսոր: Համաշխարհային հասարակական կարծիքը թյուրիմացության մեջ պահելու նպատակով թուրքական այն ժամանակվա կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, թե կայսրության հայ բնակչությունը ռազմական նկատառումներով գաղթեցվում է Միջագետք: Դա բացարձակ կեղծիք էր: Իրականում ի կատար էր ածվում արևմտահայ ժողովրդի զանգվածային բնաջնջումը:

Կառավարությունը, ներքին գործերի մինիստր, դահիճ Թալիաթը հրահանգում են տեղական մարմիններին և ոստիկանությունը՝ լինել Վճռական ու անխնա:

Ոստիկանությունը աշխատում էր կատարել այդ հրահանգները ամենայն ճշտությամբ:

Գաղտնի հրահանգի համաձայն անգն հայերի մի մասը կոտորվում էր հայրենի գյուղերում ու քաղաքներում, մի մասը բռնագաղթի ճանապարհին, իսկ մի մասն էլ կոտորվեց Միջագետքի անապատներում: «Ոստիկանությունը նրանց վրա էր խոչանում ճիշտ այնպես, ինչպես վեզովի հրաբուխն էր խոչացել Պոմպեյ քաղաքի վրա, — կարդում ենք օտար ականատեսներից մեկի հիշողություններում, — կանայք վերցվում էին լվացքի տակից, մանուկները խլվում էին անկողիններից, երեխաները դուրս էին բշտվում դպրոցներից»:

ստեղծվում քարավաններ, հանձնվում ջարդարար մի խումբ ժանդարմների կամքին ու քշվում դեպի հարավ: Իսկ ճանապարհին կենսագործվում էր հրեշավոր ծրագիրը:

Այս ձևով երիտասարդ թուրքերը տեղահան արեցին ու ջարդեցին ավելի քան մեկլեկես միլիոն հայերի: Մեր նպատակը չէ այստեղ ցույց տալ, թե որ նահանգից ինչքան մարդ կոտորվեց: Սարսուռ ազդող պատկերն ընդհանուր էր: Կարճ ժամանակամիջոցում սոսկալի տանջանքների մեջ ոչնչացավ էրզրումի, Երզնկայի, Մշո, Տրապիզոնի, Սեբաստիայի, Խարբերդի, Արաբկիրի, Մալաթիայի և այլ վայրերի հայ բնակչությունը:

Նույնքան ահուկի էր Զեյթունի, Տիգրանակերտի, Կոնիայի և շատ այլ քաղաքների հայերի կոտորածը: Եղան քաղաքներ, որոնց 30—40 հազար հայ բնակչությունից ազատվեցին հազիվ մի քանի հարյուր հոգի: Թալիաթն ու էնվերը անձամբ հետևում էին ջարդերի իրագործման ծրագրին, փոխում էին այն պաշտոնյաներին, որոնք գուցե ու խիղճ էին հանդես բերում. նրանք ստիպում էին կրոնական պետերին՝ ատելություն բորբոքել հայերի դեմ:

Դեպի արաբական անապատները սահող քարավանների վերջին հանգրվանը հանդիսացավ Տեր-Ջորը: Այնտեղ հավաքվեցին ջարդերից ողջ մնացած բեկորները, որոնց թիվը մոտենում էր հարյուր հազարի: Սովն ու համաճարակը արդեն հնձում էին մարդկանց հազարներով. բայց ոճրագործները չսպասեցին այդ բնական ընթացքին. կենտրոնից եկած հրահանգի հիման վրա կազմակերպվեց Տեր-Ջորում հավաքված 60.000 հայերի հայտնի կոտորածը, քրստըմնելի մի գործ, որի առաջ նսեմացան մինչև այդ կատարված բոլոր զաղանությունները:

Մինչդեռ այսպես ամայանում էր Արևմտյան Հայաստանը, բնաջնջվում էր աշխատավոր նրա ժողովուրդը, Թալիաթը հպարտությամբ հայտարարում էր, թե այն, ինչ չէին կարողացել կատարել Օսմանյան կայսրության սուլթանները մի քանի հարյուր տարվա ընթացքում, ինքը կատարեց մի քանի ամսում:

Իրենց գլխավոր նպատակը համարելով հայ ժողովրդի ամենալայն զանգվածների ֆիզիկական բնաջնջումը, Թալիաթը և էնվերը մտահոգված էին նաև հայերի մեջ ազգային գիտակցությունը արմատախիլ անելու խնդրով: Ահա թե ինչու զավաններում առաջին հերթին սպանվում էին ուսուցիչները և առհասարակ մտավորականները: Իսկ Պոլսում, որտեղ ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, վախենալով միջազգային հասարակական կարծեքից, այդպիսի զանգվածային կոտորածներ որոշվեց չանել, կատարվեցին հայ առաջագեմ մտավորականության, գրողների, գիտնականների, ուսուցիչների, քաղաքական գործիչների, թուրքական պառլամենտի հայ պատգամավորների մասսայական բանտարկություններ, որոնց հաջորդեց բանտարկյալների գազանային գնդակահարությունը: Այդպես սպանվեցին Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը. հոգեպես սպանվեց, թեև ֆիզիկապես մնաց կենդանի հանճարեղ Կոմիտասը, ոչնչացվեցին մեր մշակույթի հարյուրավոր ներկայացուցիչներ:

Այսպես իրագործվեցին Իթիհատ կուսակցության հակամարդկային նախագծումները:

Բոլորը՝ ծուխ, բոլորն՝ ավազ,  
 Բոլորն՝ ավար ջուր ու քամու

Վահան Տերյանի այս բառերը արտահայտեցին ժամանակակիցների ըզ-  
պացմունքները՝ կապված եղեռնի հետ:

Բնական է, որ հայ ժողովուրդը ամեն տեղ ձգտում էր դիմադրել թշնա-  
մու այդ սոսկալի հարվածներին, թեև տղամարդիկ զինվորական ծառայու-  
թյան պատրվակով անջատ խմբերով տարված էին Թուրքիայի տարբեր շրջան-  
ները, այնտեղ զինաթափ արված և կոտորված, իսկ հայկական գյուղերում և  
քաղաքներում մնացել էին զխավուրապես կանայք, մանուկները և ծերերը:  
Ձեռք համարյա չկար: Չնայած դրան, բազմաթիվ շրջաններում և քաղաքներում  
հայերը ոչ միայն դիմադրեցին, այլև ցուցաբերեցին արիություն, անձնագո-  
հություն, հաստատակամության այնպիսի օրինակներ, որոնք միշտ հպարտու-  
թյամբ կհիշվեն մեր ժողովրդի բազմահարուստ պատմության մեջ:

1915 թ. տեղահանությունների ու կոտորածների ամիսներին հայերը  
ինքնապաշտպանական կոիվներ մղեցին թուրքական կանոնավոր զորքի և թա-  
լանի եկած խաժամուժի դեմ Շապին-Գարահիսարում, Ուրֆայում, Մուսա լե-  
ռան լանջերին, Վանում, Շատախում և այլ շատ վայրերում:

Նշենք մի երկու օրինակ: Ուրֆայի ինքնապաշտպանությունը սկսվեց  
1915 թ. սեպտեմբերի 29-ին և շարունակվեց ամբողջ հոկտեմբեր ամսի ըն-  
թացքում: Կովոզ տղամարդկանց թիվը քիչ էր, սակայն այդ բացը լրացնում  
են անվեհեր կանայք՝ աղջիկներ ու հարսներ, որոնք, հաճախ հագած թղամար-  
դու համազգեստ, փամփշտակալները զցած կրծքներին, կովել են տղամարդ-  
կանց կողքին:

Ֆախրի փաշայի թնդանոթներով զինված կանոնավոր զորքի դեմ մղվող  
ծանր ու անհավասար մարտերում բացառիկ արիություն են հանդես բերում  
բազմաթիվ ուրֆացիներ, մասնավորապես Մկրտիչ և Սարգիս Յոթնեղբայր-  
յանները, Հարություն Ռաստկելենյանը: Հայրենի պատմության էջերում միշտ  
կհիշվեն Ուրֆայի մի խումբ աղջիկներ, որոնք կովեցին մինչև ուժերի սպա-  
ռումը, իսկ վերջին գնդակներով անձնասպանություն գործեցին:

Սրհասական պայքարի 25-րդ օրը ծխերի մեջ վերջ է գտնում հերոսա-  
մարտը:

Առավել ցնցող է Մուսա լեռան աշխարհահռչակ դիմադրությունը: Այդ լե-  
ռան լանջերին ծվարած վեց հայ գյուղերի բնակիչները, թվով հազիվ 5000 հոգի,  
տեսնելով, թե ինչպիսի ճակատագիր է սպասում իրենց, ընտանիքներով բարձ-  
րանում են Մուսա լեռը, պատրաստում ժամանակավոր հյուղակներ, ընտրում  
դեկավար մարմիններ և ավելի քան 50 օր դիմադրում թուրքական մեծաքանակ  
զորքերին ու թնդանոթային ուժեղություններին:

Իր ծավալով, կազմակերպվածությամբ, մասնավանդ արդյունքով ամենից  
նշանակալիցը Վանի հերոսամարտն էր: Այն տևեց 1915 թ. ապրիլի սկզբնե-  
րից մինչև մայիսի 6-ը՝ ավելի քան մեկ ամիս իրենով զբաղեցնելով թուրքա-  
կան հրամանատարությունը, որն ի պատասխան նահանգապետ Ջեվդեթի  
պարբերական ահազանգերի, շարունակ զորքեր ու թնդանոթներ էր ուղարկում  
Վան՝ ճնշելու համար ինքնապաշտպանությունը: Կովում ընդգրկված էր ամբողջ  
ժողովուրդը՝ 10 տարեկան երեխայից մինչև 70 տարեկան ծերունին, կանայք,  
աղջիկներ, տարբեր զբաղմունքի մարդիկ: Կովի սկզբին Վանի մարտիկները  
ունեին տարբեր տեսակի ավելի քան 700 հրացան, չհաշված սառը զենքը: Քի-  
միայի ուսուցիչը ծծումբից և այլ նյութերից պատրաստել էր տալիս վառող,  
զինագործ արհեստավորները պատրաստում էին զենքեր, անգամ թնդանոթ,

ատարձագործներն ու որմնադիրները դիրքեր էին կառուցում, բանվորները խրամատներ փորում: Ականավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանը փամփշտակալները խաշաձև գցած լանջին, հրացանը սեղմած կրծքին, կռվում էր բացառիկ խիզախությամբ:

Ձինվորական շտաբը ամեն օր, հաճախ օրական երկու-երեք անգամ, հրատարակում ու տարածում էր բյուլետեն-ազդեր. դրանց մեջ նկարագրվում էին կռվի ընթացքը, խիզախ մարտիկների քաջագործությունները: Սամանված էին հատուկ մեղալներ ատավել աչքի ընկած այն հերոսների համար, որոնք կատարում էին մեծ սխրագործություններ, հրդեհում էին զորանոցներ, ավերում թշնամու դիրքերը:

Ու այսպես կռվեց Վանը, մարտնչեց հերոսությամբ մինչև ռուսական բանակի առաջավոր զնդերի մոտենալը քաղաքի պարիսպներին, մինչև Ձեվդեթի ռհմակների փախուստը ռուսական հաղթական զորքի առջևից:

Ինքնապաշտպանական կռիվներ են բորբոքվել նաև Շատախում, Բաղեշում, Ձեյթունում, Սասունում և այլ տեղերում. դրանք, սակայն, մասնակի երևույթներ էին և չունեին այն կազմակերպվածությունը, որ տեսնում ենք Մուսա լեռան վրա և Վասպուրականում:

Առանձին տեղերում ինքնապաշտպանության կռիվների հաջող արդյունքները (Վան, Մուսա լեռ) ցույց տվեցին, որ եթե դիմադրությունը ունենար ավելի կազմակերպված բնույթ, այդ կազմակերպումը ընդգրկեր ամբողջ Արևմտյան Հայաստանը, եթե դիմադրությունը լիներ լավ նախապատրաստված, լիներ անհրաժեշտ քանակությամբ զենք, ապա այն կարող էր պսակվել շատ ավելի մեծ արդյունքներով:

Վերջին քսանամյակի գաղութային երկրների ազատագրական պայքարի հարուստ և ուսանելի փորձը ցույց տվեց, որ ճնշված ժողովուրդները իրոք կարող են հաղթել գաղութարարներին, մինչև անգամ ուժերի անհավասարության պայմաններում, եթե միայն նրանք ցուցաբերում են անհրաժեշտ կազմակերպվածություն և նախաձեռնություն: Սակայն Արևմտյան Հայաստանի աշխատավորությունը, մի շարք անբարենպաստ պայմանների հետևանքով, ի վիճակի չէր հարկ եղած կազմակերպվածությամբ հակահարված տալ թուրք ջարդարարներին: Ձենք փաստորեն չկար: Ինքնապաշտպանական կռիվները սկսվում էին առանց որևէ ծրագրի, տարերային կերպով: Նրանց ժամկետները չէին համաձայնեցված իրար հետ: Նախաձեռնությունը ամբողջապես գտնվում էր թշնամու ձեռքում, որն ամենուրեք գերակշռություն ուներ թե՛ զինվորների, թե՛ զենքի տեսակետից:

Զպետք է մոռնալ նաև այն հանգամանքը, որ զենք կրելու ընդունակ հայ երիտասարդությունը մեծ մասամբ նախօրոք բանակ էր կանչված և ոչնչացված էր:

Ահա թե ինչու թուրքական կառավարությունը հիմնականում հաջողվեց իրագործել իր հրեշավոր նախագծերը:

Ի՞նչ դիրք բռնեցին եվրոպական մեծ պետությունները 1915—1916 թթ. հայկական ջարդերի նկատմամբ: Նրանք ոչ միայն չարգելեցին հրեշային ծրագրի իրագործումը, այլև մասնակցեցին կամ լռելյայն հանդուրժեցին այն: Հենց դա հնարավորություն տվեց դահիճներին՝ ազատ, համարձակ գործելու, առանց պատասխանատվության երկյուղի:

Այդ պետություններից Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիան շահագրգռված էր Արևմտյան Հայաստանի հայ բնակչության տեղահանումով, բանի որ գերմանական գաղութարարների կարծիքով դա կարող էր հեշտացնել Մերձավոր արևելքը նվաճելու իրենց ծրագրի իրագործումը: Գերմանիային չէր կարող դուր գալ հայ ժողովրդի որոշակի ու վճռական քաղաքական կողմնորոշումը դեպի Ռուսաստան, այն, որ հայերը համարում էին, որ իրենց լավագույն դաշնակիցը ուս ժողովուրդն է: Ահա թե ինչու Գերմանիան անմիջականորեն մասնակցեց հայերի «տեղահանության» հենց իր կողմից պաշտպանված ծրագրի կենսագործմանը: Թուրքիայի գերմանական դեսպան Վանդենհայմը անձամբ հետևում էր տեղահանություններին: Կոտորածների ամբողջ ընթացքում գերմանական թերթերը ոչ միայն չէին մեղադրում ջարդերի կազմակերպիչներին, այլև արդարացնում էին, չվարանելով հայերին համարել «անհնազանդ», «ապստամբ» տարր:

Գերմանացի պաշտոնյաները մի շարք վայրերում մասնակցում էին ջարդերին, հատկապես ինքնապաշտպանական կռիվների ճնշմանը: Այսպես, Վանի ինքնապաշտպանության ժամանակ թուրքական զորքերի համար ստեղծված օրհասական պահին ժամանեց գերմանական մի սպա և ստանձնեց հրետանու հրամանատարությունը: Նա բոլոր թնդանոթները հավաքեց մի բարձունքի վրա և անձամբ ղեկավարեց թնդանոթային ուժակոծումը:

Մուշի հայերի ինքնապաշտպանության դեմ կովող թուրքական հրետանին նույնպես ղեկավարում էին գերմանական սպաները, որոնք մասնակցեցին 50 հազար մշեցիների ջարդին: Դարձյալ գերմանացի սպան էր, որ թնդանոթի մոտ կանգնած ումբեր էր արձակում Ուրֆայի ինքնապաշտպանների վրա, իբրև դեմ տեսնելով հանդերձ բազմաթիվ կանանց ու աղջիկների: Թուրք ջարդարարներին օժանդակում էին նաև գերմանական հյուպատոսները Հալեպում, Ուրֆայում, Ադանայում, Տրապիզոնում և այլ վայրերում:

Այսպիսով, Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիան թե՛ ուղղակի, թե՛ կազմակերպչական տեսակետից հովանավորեց և օժանդակեց արևմտահայության բնաջնջման եղեռնագործությանը:

Բնորոշ է դաշնակից պետությունների դիրքը այս հարցում: Անտանտի կառավարող շրջանները, բացի փարիսեցիական ճառերից, ցավակցական խոսքերից, շոշափելի ոչինչ շարեցին ջարդերը կանխելու ուղղությամբ: Քանի դեռ պատերազմը շարունակվում էր, նրանք ահավոր փաստը հմտորեն օգտագործեցին իրենց թշնամի Գերմանիայի և Թուրքիայի դեմ, ջարդերը որակելով անմարդկային, քաղաքակրթությանը ամոթ երևույթ, գրեցին այդ մասին մամուլում: Լոնդոնում, Փարիզում «հայասիրական» երեկույթներ էին կազմակերպվում, ճառեր արտասանվում, բայց այս բոլորը դուրս չեկավ մարդասիրական կամեցողական ցույցերի սահմաններից: Պատահական չէ, որ Միացյալ Նահանգների կառավարությունը, որին հայտնի էին կատարված ոճրի բոլոր մանրամասնությունները, ոչ մի պաշտոնական հայտարարություն չարեց հայ ազգի բնաջնջման դեմ: Ավելին, ամերիկյան մի շարք պաշտոնական անձինք, ըստ էության, իրենց պաշտպանության տակ առան թուրք դահիճներին՝ հայտարարելով, թե հայկական կոտորածների վերաբերյալ լուրերը ճիշտ չեն:

Պատերազմի ընթացքում տակտիկական նկատառումներով ջարդերի մասին ամենից շատ խոսող Անգլիան, որը հրատարակել էր կոտորածների մանրամասնությունները ցույց տվող հայտնի «Կապույտ գիրքը», և Տրանսիան,

որ արագորեն այն թարգմանել և վերահրատարակել էր ֆրանսերեն, ոչ այնքան հայերին ափսոսալուց, որքան թշնամի Գերմանիային մեղադրելու համար, պատերազմի ավարտից հետո մոռացան հայ ժողովրդին, ավելի ճիշտ՝ ուղղակի դավաճանեցին: Մինչև անգամ պատերազմի ժամանակի Անգլիայի պրեմիեր Նոյթ Զորջը հետագայում գրած հիշողություններում հայ ժողովրդի դժբախտ ճակատագրի պատասխանատվության զգալի մասը դնում էր Անգլիայի վրա:

Եթե պետական շրջանները հայկական հարցը օգտագործում էին իրենց դիվանագիտական խաղերի համար, ինչպես այն օգտագործել էին նախորդ մի քանի տասնամյակների ընթացքում, ապա բարի կամքի, ազնիվ զգացումի տեր բազմաթիվ մարդիկ՝ աշխատավորներ, գիտնականներ, գրողներ, հրապարակախոսներ, բողոքի հուժկու ձայն բարձրացրին կատարված մեծ ոճրի դեմ, այն բնութագրելով որպես մարդկային երևակայությունը սարսուղ-նող, քաղաքակիրթ մարդկությունը դեպի նախնադարյան վայրենությունը մղող մի երևույթ:

Երիտասարդ թուրքերի զազանային ոճիրները ցասումնալից բառերով դատապարտեցին կոմունիստական կուսակցության անվեհեր զինվոր, բոցաշունչ տրիբուն Սերգեյ Միրոնովիչ Կիրովը, պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկին, մեծ հայագետ Նիկողայոս Մառը և ուրիշներ:

Ռուսաց բանակի հազարավոր շարքային զինվորներ ու սպաներ կատարում էին իրենց հումանիստական պարտականությունը՝ Հայաստանի ազատագրված շրջաններում ամենայն աջակցություն ցույց տալով մահից հրաշքով ազատված մանուկներին, ծերերին և կանանց:

Մեզ հայտնի են ուսա ժողովրդի ներկայացուցիչների բազմաթիվ անուններ, որոնք, լուր առնելով հայ ժողովրդի տառապանքների մասին, կամավոր դնացել են բանակ կամ բանակում խնդրել են տեղափոխել իրենց կովկասյան ռազմաճակատ, ցանկանալով օգնել Հայաստանի ազատագրման գործին:

Ֆրանսիայում հրապարակային ճառերով, հողվածներով ու առանձին գրքերով հայերի պաշտպանությամբ հանդես եկան մեծ հումանիստ-գրողներ Անատոլ Ֆրանսն ու Ռոմեն Ռոլանը, հայագետներ Անտուան Մեյեն, Ժակ դը Մորգանը, Ֆրեդերիկ Մաբլերը և շատ ուրիշներ, Անգլիայում՝ պառլամենտի անդամ Բրայսը, Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ ճանաչված հրապարակախոս, փիլիսոփայության դոկտոր Հերբերտ Ադամս Գիբոնսը և ուրիշներ:

Թուրքական յաթաղանից փրկված արևմտահայ գաղթականներին օգնություն ցույց տալու գործում մեծ դեր կատարեց նորվեգական ականավոր գիտնական-բեկոսխույզ, Սովետական Միության բարեկամ Ֆրիտցոֆ Նանսենը:

Արևմտահայերին բնաջնջելու երիտթուրքական քաղաքականության դեմ դուրս եկան նաև գերմանական ժողովրդի առաջավոր ներկայացուցիչները և, մասնավորապես, գերմանական կոմունիստական կուսակցության ականավոր գործիչ Կարլ Լիբկնիխտը, ինչպես նաև հայտնի հայագետ, պրոֆեսոր Յոզեֆ Մարկվարտը:

Մի շարք երեկի գիտնականներ հանդես են եկել հայերի նկատմամբ կատարված գեհնոցիդի անմիջական կազմակերպիչներին՝ էնվերին, Թալիաթին, Ջեմալին, Նազրմին և մյուսներին պատասխանատվության կանչելու, նրանց միջազգային դատարանին հանձնելու պահանջով:

Փաստ է, որ առաջին համաշխարհային պատերազմը սանձազերծեցին իմպերիալիստական մեծ պետությունները աշխարհը բաժանելու նպատակով:



Տխուր փաստ է նաև այն, որ այդ պատերազմում աշխարհի շատ ժողովուրդներ՝ այդ թվում և հայ ժողովուրդը, տվեցին հսկայական զոհեր: Այսպիսին է Խմպերիալիստական կարգերի օրինաշարությունը:

Մեծ քանակությամբ գաղթականներ, ոչոնք հազիվ էին ազատվել թուրքական յաթաղանի տակից, սփռվեցին աշխարհով մեկ, ստեղծեցին սփյուռքը:

1915 թ. վերջերին Կովկաս հասան գլխավորապես Վասպուրականի, Ալաշկերտի, Մուշի շրջանի գաղթականները: Գաղթականների մի մասը անցավ դեպի Ռուսաստան, ստացավ ուսման մեծ ժողովրդի եղբայրական օգնությունը:

Սակայն կապիտալիզմի կարգերը որևէ հեռանկար չէին կարող բանալ հայ ժողովրդի առջև: Հայ ժողովուրդը մնում էր որբ ու անհայրենիք: Հայ ազգը կանգնած էր կազմալուծման վտանգի առջև:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, ի թիվս այլ ժողովուրդների, փրկություն բերեց նաև հայ ժողովրդին: Նորաստեղծ սովետական կառավարությունը հենց առաջին օրերից բացառիկ հետաքրքրություն հանդես բերեց մեր ժողովրդի նկատմամբ, մտահոգվեց գաղթական հայերի ծանր վիճակով: 1917 թ. դեկտեմբերի 31-ին ժողովրդական կոմիսարների խորհուրդը «Թուրքահայաստանի մասին» ընդունեց հատուկ դեկրետ՝ Լենինի ստորագրությամբ: Այդ դեկրետում սովետական կառավարությունը պաշտպանում էր Թուրքահայաստանի հայերի ազատ ինքնորոշման իրավունքը և հանձնարարում Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար Ստեփան Ծահուսյանին, օգնություն ցույց տալ տարբեր երկրներում ցրված գաղթական հայերի՝ անարգել Թուրքահայաստան վերադառնալու գործին: Այդ դեպքում անհրաժեշտ էր համարվում «Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն աքսորված հայերի անարգել վերադարձը Թուրքահայաստանի սահմանները, որի վրա ժողովրդական կոմիսարների խորհուրդը պետք է պնդի թուրքական իշխանությունների հետ ունենալիք խաղաղ բանակցությունների ժամանակ»:

Լենինյան այս ջերմ հոգատարությունը հայ ժողովրդի դժբախտ վիճակի նկատմամբ իր արտահայտությունը գտավ Ռուսաստանի այն բոլոր քաղաքներում, որտեղ լցվել էին գաղթական հայերը (Ռոստով, Պյատիգորսկ, Արմավիր և այլն): Ամենուրեք ուսման ժողովուրդը օգնեց հայերին՝ բուժելու ծանր վերքերը: Սակայն հայ ժողովրդի փրկության և վերածնության խնդիրը դեռ սպասում էր իր արմատական լուծմանը և այդ լուծումը տեղի ունեցավ: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության արևը փայլատակեց նաև Նաիրյան երկրում: Հայաստանում հաստատվեցին սովետական կարգեր:

Կարճ ժամանակամիջոցում, շնորհիվ սովետական կառավարության ամենօրյա հոգատարության, շնորհիվ ստեղծագործ հայ ժողովրդի աշխատասիրության ու կենսունակության, բուժվեցին վերքերը, վերաշինվեցին քաղաքները, վերականգնվեց քայքայված գյուղատնտեսությունը, նորից ծուխ բարձրացավ հայ շինականի տանիքից: Զարկ տրվեց մշակույթի զարգացմանը, հիմնվեցին դպրոցներ, պետական համալսարան, բազմաթիվ թերթեր, պարբերականներ, հիմնադրվեց Երևանի պետական առաջին թատրոնը:

Սովետական իշխանության հաստատումով վերջնականապես ամրապնդվեց խաղաղությունը Հայաստանում: Ճիշտ է, շատ ծանր էր կոտորածներից, պատերազմներից և դաշնակիների հայրենակործան իշխանության տարիներից հետո վերջնականապես ավերված հողի վրա սկսել նոր կյանքի շինարարու-

Բյուռնը: Ամբողջ Հայաստանի (Արևելյան և Արևմտյան) հայ բնակչությանից, որը 1914 թվականին կազմում էր շուրջ 2.500.000, մնացել էր մեկ երրորդը մոտ 760.000: Այս փոքր գանգվածն էր, որի վրա պատմությունը դրեց անասելի մեծ խնդիր՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ստեղծել աճող, բարգավաճող մի սոցիալիստական հանրապետություն, որտեղ բոլոր ազգությունների բնակիչները պետք է ապրեն եղբայրական համերաշխության մթնոլորտում:

Արևմտյան Հայաստանի հայության մի մասը, շուրջ կես միլիոն, հազիվ փրկված թուրքական յաթաղանից, ցրվեց կապիտալիստական և այն ժամանակ գաղութային տարբեր երկրներ և, տնքալով կապիտալիզմի անողորմ լծի տակ, կորցրեց իր գոյության հեռանկարը: Սակայն շուտով բարի լուրեր հասան Սովետական Հայաստանից՝ սկսվել էր մեր երկրի շինարարության հոյակապ աշխատանքը: Քարավաններ-քարավանների ետևից ուղղվեցին դեպի հայրենիք 45 տարվա ընթացքում մոտ 200.000 հայ տեղափոխվեց Հայաստան, իր տեղը գտավ սոցիալիստական շինարարության մեջ, միացավ իր հարազատ եղբայրներին:

Անխոնջ աշխատանքի 45 տարի: Ճիշտ է, այդ ընթացքում տեղի ունեցավ երկրորդ համաշխարհային պատերազմը: Մի քանի տարով կանգ առավ շինարարությունը, մեր հայրենիքի այլ ժողովուրդների հետ և հայ ժողովուրդը կրեց մեծ դժվարություններ և տվեց բազմահազար զոհեր:

Սովետական Միության հզորության շնորհիվ մինչև անգամ պատերազմի տարիներին այստեղ կազմակերպվեցին նոր գործարաններ ու հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան իր բաղմամբով ինստիտուտներով:

Սովետական բանակի շարքերում հայկական դիվիզիաներից մեկը մարտերով մտավ Բեռլին, այսպիսով փառքով պսակելով հայ ժողովրդի քաջորդիների ռազմական փայլուն սխրագործությունները: Մեր ռազմիկների քաջագործությունները օրինական ազգային հպարտությամբ լցրեցին հայության սիրտը ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում:

Անցավ պատերազմը և ստեղծագործ շինարար աշխատանքը ծավալվեց նոր, ավելի ուժգին թափով: Արդյունաբերության և գիտության աննախընթաց զարգացման շնորհիվ արմատապես փոխվեց մեր հանրապետության դեմքը:

Եվ ահա 45 տարվա անընդհատ զարգացման հրաշալի արդյունքները: Սովետական Հայաստանի բնակչությունը համարյա եռապատկվել է: Ինչպիսի՞ հակապատկեր: Բնակչության եռապատիկ նվազում կապիտալիզմի և իմպերիալիստների իշխանության ներքո և բնակչության եռապատկում սոցիալիստական ազգերի եղբայրական ընտանիքում:

Նախկինում տնտեսապես հետամնաց երկրից Հայաստանը վեր է ածվել ժամանակակից արդյունաբերական երկրի: Համարյա հարյուր անգամ, համեմատած մինչհեղափոխական Հայաստանի հետ, ավելապես է արդյունաբերական արտադրանքի քանակը: Դա ինքնըստինքյան մի հրաշք է: Բայց գլխավորը ոչ թե քանակն է, այլ արդյունաբերության այն նոր ճյուղերի ստեղծումը, որ հատուկ է բարձր զարգացման հասած երկրներին:

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության անասան հոգատարության շնորհիվ կատարվեցին խոշոր ֆինանսական կապիտալ ներդրումներ, Հայաստանում ստեղծվեցին արդյունաբերության այնպիսի խոշոր ձեռնարկություններ, որոնք իրենց մասնագիտացումով ամբողջապես

համապատասխանում են մեր ժողովրդի աշխատանքային ընդունակություններին, ձգտումներին և ստեղծագործական ավանդներին: Ստեղծվեց քիմիական, էլեկտրատեխնիկական հզոր արդյունաբերություն, զարգացավ ապրիոէլեկտրոնիկան, գնալով ավելի ծավալվեց շինարարության թափը, ընդլայնվեցին նրա մասշտաբները:

Եթե սովետական իշխանության առաջին տարիներին այնպիսի մի փոքր հիդրոկայանի կառուցումը, ինչպիսին էր Երևանի առաջին հիդրոկայանը, պատմական երևույթ էր մեր հանրապետության համար, ապա այսօր այնպիսի մի հսկա ձեռնարկության կառուցման սկիզբը, ինչպիսին է Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատը կամ նրա նման ուրիշ վիթխարի կառույցներ, ընդունվում է որպես մեր տնտեսության զարգացման բնական օրինաչափություն:

ՀԿՊ Կենտրոնական կոմիտեն և կառավարությունը բռնել են տնտեսության աշխատատար բնագավառների առաջնահերթ զարգացման ճիշտ ուղին: Դա նշանակում է, որ մեր ամբողջ աշխատավորության առաջ բացվում են ստեղծագործական աշխատանքի նոր, ավելի լայն հնարավորություններ:

Հայաստանը դարձել է հզոր սովետական գիտության կարևոր կենտրոններից մեկը: Վերջերս կայացած իր նիստերից մեկում Սովետական Միության գիտությունների ակադեմիայի նախագահությունը նշեց գիտական այն բազմաթիվ բնագավառները, որտեղ Հայաստանի գիտնականները կատարում են կարևոր աշխատանք և որտեղ միութենական գիտությունը իր սպասելիքները կապում է մեր ակադեմիայի աշխատանքների հետ: Հենց այն հանգամանքը, որ բազմաթիվ օտարերկրյա գիտնականներ այսօր գալիս են Հայաստան մեր գիտական հաստատությունների նվաճումներին ծանոթանալու համար, ցույց է տալիս, թե որքան առաջ է գնացել մեր ժողովուրդը:

Ծաղկել է հայ ժողովրդի մշակույթը, գրականությունը և արվեստը: Ողջ սովետական ժողովուրդը պարծանքով է խոսում մեր մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանի գործերի մասին: Հայաստանը դարձել է երաժշտության զարգացման կարևոր կենտրոններից մեկը, իսկ մեր երաժշտությունը հնչում է այսօր ոչ միայն Սովետական Միությունում, այլև աշխարհի համարյա բոլոր մայրաքաղաքներում և այլ տեղերում: Մեծ եղևոնի զոհ Կոմիտասի երաժշտությունը հայտնի դարձավ Հայաստանի սահմաններից շատ հեռու: Նոր ծաղկում ապրեց հայկական դպրոցը: Հայոց լեզուն դարձավ համալսարանի, բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական ինստիտուտների գործածական լեզու: Պահպանելով իր հին բուրմունքը, հայոց լեզուն հարստացավ նոր դարաշրջանին համապատասխանող բոլոր անհրաժեշտ բառերով և միջոցներով:

Վերջապես, դարերի ընթացքում պետականությունից զրկված հայ ժողովուրդը դարձավ մեծ Միության իրավահավասար անդամներից մեկը, նրա մեջ արմատավորվեց պետականության գիտակցությունը: Զարգացում ապրեցին նաև մեր հայրենասիրական զգացմունքները: Այսօրվա մեր սերը դեպի սեփական հանրապետությունը՝ Հայաստանը, անբաժան է դեպի ամբողջ Սովետական Միությունը և եղբայրական ժողովուրդների ընտանիքը տաժած սիրուց:

Սովետական Հայաստանի այս բոլոր նվաճումների համար մենք պարտական ենք Սովետական Միության կոմունիստական կուսակցության իմաստուն քաղաքականությանը, լենինյան ազգային քաղաքականության սկզբունքների անշեղ իրագործմանը:

Այլ կերպ դասավորվեց սփյուռքի հայության բախտը: Տնտեսական անապահովություն, օտար միջավայր, գաղթականի վիճակ՝ այդ բոլորը երկար գեգեբումների և թափառումների պատճառ հանդիսացան սփյուռքահայության համար: Քիչ չէին բուրժուական կառավարությունների երկդիմի խոստումները:

Բայց քիչ էին Արևմուտքում Ֆրիտյոֆ Նանսենի պես ազնիվ գործիչներ, որոնք ձգտում էին օգնության գալ «խարված ազգին»: Սակայն ինքը՝ սփյուռքահայությունը հերոսական պայքար մղեց իր ազգի, իր լեզվի պահպանման համար: Արաբական անապատում, ավազի մեջ մեսրոպյան տառերը իր մանուկների առաջ մատնեցրով նկարող հայ մոր պատկերը դարեր կապրի մեր սրտերում: Հայ բազմաթիվ մտավորականների կողմից արտասահմանում հայ մշակույթը պահպանելու ուղղությամբ կատարված անխոնջ աշխատանքը բարձր է ամենայն գովասանքից:

Բայց տասնամյակ-տասնամյակի հետևից ձուլումը, «սպիտակ ջարդը» կատարում է իր գործը: Եվ այդ երևույթը, «սպիտակ ջարդը» շատ ավելի մեծ թափ կատանար, եթե չլիներ դրան հակադրվող մի նոր հանգամանք: Այդ նոր հանգամանքը սփյուռքահայ զանգվածի օրինական ազգային հպարտությունն է իր իսկական, թեև հեռավոր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի տնտեսական, գիտական ու մշակութային նվաճումների առթիվ: Այդ երևույթը գնալով ուժեղանում է և հիմք է ծառայում սփյուռքում այսօր տեղի ունեցող հայրենասիրական զգացմունքների վերելքի համար: Այդ նոր, մաքուր զգացմունքները ազատ են նեղ ազգայնական նստվածքներից, որոնք մի ժամանակ առաջացան կյանքի դաժան հանգամանքների ներքո:

Սփյուռքի հայության գոյատևման հիմնական գործոններն են Սովետական Հայաստանի հաջողությունները և հայրենադարձությունը, որը հայրենիք վերադառնալու հույս է ներշնչում օտարության մեջ տառապող բոլոր հայերին:

Մենք այստեղ, Սովետական Հայաստանի քաղաքացիներս, պետք է խորապես գիտակցենք, թե որքան մեծ լինեն մեր աշխատանքային, ստեղծագործական նվաճումները, այնքան ավելի շուտ բոլոր հայրենասեր հայերը կհավաքվեն իրենց հայրենիքում՝ Սովետական Հայաստանում:

Ճիշտ և իմաստուն է կոմունիստական կուսակցության քաղաքականությունը, որը շեշտը դնում է շինարարական, ստեղծագործական աշխատանքի վերելքի վրա: Այստեղ է մեր նոր նվաճումների, նոր հաղթանակների երաշխիքը, մեր պայծառ ապագան:

Մեծ եղեռնի 50-ամյակը և Հայկական Սովետական Հանրապետության 45-ամյակը մենք դիմավորում ենք խաղաղ պայմաններում, սովետական ժողովուրդների ապահով ընտանիքում: Բայց հայտնի է, որ խաղաղությունը ամբապնդելու համար անհրաժեշտ է գործնական պայքար խաղաղության համար: Իր կյանքում շատ սև օրեր տեսած հայ ժողովուրդը վճռականորեն բողոքում է պատերազմ սանձազերծելու իմպերիալիստական բոլոր փորձերի դեմ: Զայրույթով մենք իմացանք Վիետնամում ամերիկական իմպերիալիստների ագրեսիայի մասին: Այս օրերին, ավելի քան երբևիցե, հայ ժողովուրդը համակրում է բոլոր այն ժողովուրդներին, որոնք պայքարում են գաղութարարների դեմ, հանուն ազատության և ազգային անկախության: Այն մարդիկ, որոնք գաժանորեն իրագործում են ժողովուրդների ազատությունը խեղդելու ծրագրերը, պետք է վերջ ի վերջո կրեն անձնական պատասխանատվություն որպես հանցագործներ: Ո՛չ մի ներում չի կարող լինել նրանց, ովքեր նապալմով խեղճեղկազիր 4—3

դում են ժողովուրդների ազատագրական պայքարը, ո՛չ մի ներում պատերազմական հանցագործներին: Ոչ ոք իրավունք չունի ներելու գենոցիդը իրականացնող դահիճներին:

Հայկական կոտորածի կատարված փաստը զայրույթ և ատելություն է առաջացնում այդ գենոցիդը իրականացնող արյունարբու դահիճների նկատմամբ: Բայց երբեք հայ ժողովուրդը չի ունեցել ատելություն այլ ազգերի աշխատավորների, այդ թվում թուրք աշխատավոր ժողովրդի հանդեպ: Դա կհակասեր մեր հումանիստական ավանդներին:

Իր ծննդյան առաջին օրվանից սկսած սովետական պետությունը վարել է և այժմ վարում է խաղաղության քաղաքականություն: Ժողովուրդների երջանկությունը ապահովելու տեսակետից դա միակ ճշմարիտ ու խելացի քաղաքականությունն է: Սովետական բոլոր ժողովուրդները ամեն ինչ անում են խաղաղությունը երկրագնդի վրա պաշտպանելու համար: Հայ ժողովուրդը գուցե ամենից լավ է գիտակցում, թե ինչպիսի շարիք է պատերազմը:

Մասնավորապես սովետական ժողովուրդը ձգտում է, որ խաղաղություն տիրի իր հարևաններից իրեն բաժանող բոլոր սահմանների վրա: Մենք զբաղված ենք խաղաղ ստեղծագործական աշխատանքով և այդ աշխատանքում տեսնում ենք մեր բոլոր իդեալների և իդձեքի իրականացման երաշխիքը:

Սակայն փորձը ցույց է տալիս, որ իմպերիալիստները և գաղութարարները անընդհատ դավում են նոր ավազակային գործողություններ: Կասկած չկա, որ իմպերիալիստները շատ կուզենային ուղարկել իրենց զինված կողբադիններին նաև Հայաստան՝ այս անգամ ոչ թե օխտը տարվա, այլ 45 տարվա խարշը մեզանից պահանջելու:

Բայց, եթե անցյալում արդեն Սասունցի Դավիթը ջարդել է հարկահան Կողբադինի գլուխը և դուրս վռնդել նրան հայոց երկրից, ապա այսօր, 20-րդ դարի 2-րդ կեսի սովետական հայ ժողովուրդը՝ մեր ժամանակների Սասունցի Դավիթը, կանգնած է որպես սովետական երկրի պաշտպան իր 14 հարազատ հսկա եղբայրների, Իլյա Մուրոմեցի, Տարիելի և ուրիշների կողքին, և չկա մի ուժ, որը կարողանա հաղթել նրան:

\* \* \*

Մեր աշխատավոր ժողովրդի լայն զանգվածները զոհունակությամբ ընդունեցին Սովետական Հեշաստանի կառավարության որոշումը եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնելու նպատակով Երևան քաղաքում կոթող կանգնեցնելու մասին: Այս որոշումը ցույց է տալիս, թե ինչպիսի հարգանք են տածում զոհվածների հիշատակի նկատմամբ մեր ժողովուրդը և մեր հարազատ կառավարությունը:

Սակայն մեր անթիվ զոհերի հիշատակի իսկական հավերժացումը մեր ժողովրդի մեծ վերածնունդն է, մեր այսօրվա և վաղվա շինարարական աշխատանքն է, հանուն մեր հանրապետության տնտեսական ու մշակութային բարգավաճման և նրա բնակչության կենսամակարդակի բարձրացման:

\* \* \*

Հազարավոր տարիների ընթացքում պատմական բախտն իր երեսը դարձրել էր հայ ժողովրդից: Մենք ունեցանք անթիվ կորուստներ: Բայց ահա 45 տարի է, ինչ պատմական բախտը ժպտում է մեզ իր բարի ժպիտով և խոստա-

նում է մեր բոլոր ազնիվ ցանկությունների և իղձերի իրականացում: Եվ իրոք, մենք ձեռք բերեցինք անհամար նվաճումներ՝ ապրելով սովետական ժողովուրդների ընտանիքում, հավատարիմ մնալով այդ ընտանիքի ընդհանուր շահերին:

Սովետական Հայաստանի շինարարության ամբողջ ընթացքում մեր հանրապետությունը միշտ հենվել է Սովետական Միության կառավարության բազմակողմանի և կազմակերպված օգնության վրա: Հայ ժողովուրդը ըմբռնում է այդ մեծ օգնության նշանակությունը և իր հերթին ազնվորեն մասնակցում է ամբողջ Միության առաջ կանգնած կարևոր խնդիրների լուծմանը:

Հայաստանի համար առանձնապես մեծ նշանակություն ունի Անդրկովկասի երեք ժողովուրդների՝ վրացիների, ադրբեջանցիների և հայերի անխախտ բարեկամությունը: Այդ բարեկամությունը գալիս է դարերի խորքից, բայց այսօր, սովետական աշխարհի պայմաններում ստացել է նոր, ավելի խոր իմաստ: Այդ բարեկամությունը ամեն օր վեր է ածվում բազմաթիվ կոնկրետ գործերի, ամենօրյա համագործակցության՝ շինարարական աշխատանքում: Անկեղծ է և անշահախնդիր այդ բարեկամությունը, և այն կապրի հավիտյան:

Սրբությամբ պահպանել սովետական ժողովուրդների անսասան դաշինքը՝ դա եղել է, այժմ է և միշտ կլինի հայ ժողովրդի միակ ճիշտ վարքագիծը: Խաղաղ ստեղծագործական աշխատանքով զբաղված Հայաստանի աշխատավորությունը պահպանելով մեր պատմական լավ ավանդները, միևնույն ժամանակ ձգտում է դեպի առաջադեմը, նորը, իր հայացքը ուղղած դեպի սովետական ժողովուրդների լուսավոր ու երջանիկ ապագան:

Կառուցելով մեր նոր կյանքը, շենացնելով մեր երկիրը, ամրացնելով սովետական ժողովուրդների բարեկամությունը, մենք գիտակցում ենք, որ իրականացնում ենք նաև հարյուր հազարավոր մեր զոհված եղբայրների ու քույրերի նվիրական իղձերն ու երազանքները:

Մեր եղբայրներն ու քույրերը նահատակվեցին, բայց շուրացան իրենց ժողովրդին: Ահա ինչու բարձր պահելով մեր ժողովրդի պատիվը, իսկ այն բարձրացվում է միայն ազնիվ, քրտնաջան, հայրենանվեր աշխատանքի միջոցով, մենք իմաստավորում ենք նաև նրանց անսահման նվիրվածությունը մեր ժողովրդին: Այնպես ապրենք, այնպես աշխատենք, այնպես նվիրված լինենք մեր բազմազգ սոցիալիստական հայրենիքին, որ հետագա սերունդներն ասեն՝ այո, ավելի լավ էր մեռնել, նահատակվել, քան ուրանալ այդ ժողովրդին:

Մեր անթիվ զոհերի անմոռաց հիշատակը միշտ կոգևորի մեզ մեր խաղաղ շինարարական աշխատանքում:

Եվ ճիշտ է ասել Եղիշե Չարենցը Կոմիտասի մասին.

Հայրենացած, սրբացած  
Կապրի ոգիդ՝ հմայող՝  
Դարձած ելնող երգի ձայն  
Եվ հայրենի դարձած հող...

Հարյուր հազարավոր մեր զոհերի հմայող ոգին այսօր ելնում է վեր՝ դարձած աշխատանք, մշակույթ, ձուլվում է այն կախարդական շաղախին, որից կառուցվում է մեր սքանչելի երիտասարդ երկիրը՝ Սովետական Հայաստանը:

Академик В. А. Амбарцумян

**ТРАГЕДИЯ И ВОЗРОЖДЕНИЕ****Резюме**

Прошло полвека с того времени, когда правящие круги султанской Турции провели в жизнь тщательно разработанный план поголовного истребления всего армянского населения Османской империи. Именно в Турции было положено начало геноциду — заранее запланированной и обдуманной программе уничтожения целой нации. Геноцид западных армян, осуществленный правящей младотурецкой кликой при покровительстве и прямом поощрении кайзеровской Германии, принес беспрецедентные в истории страдания армянскому народу, стоил жизни около 1,5 миллионам его сынов и дочерей.

Несмотря на неблагоприятные условия, армянское население в ряде мест оказало мужественное сопротивление регулярным турецким войскам, отстояв тем самым свою жизнь, честь и национальное достоинство. В результате, части армянского населения удалось спастись с приходом русских войск. Однако огромные массы армянского народа оставались беззащитными. Только благодаря победе Великой Октябрьской социалистической революции они приобрели возможность национального возрождения. Советская власть позаботилась о тысячах беспризорных армян, создала необходимые условия для проявления творческого духа, трудолюбия и таланта нашего народа. Советская Армения стала подлинной родиной всех армян. За прошедшие 45 лет около 200 тысяч зарубежных армян репатриировалось на свою новую родину—Советскую Армению. Огромные достижения последней в области экономики, науки и культуры наполняют чувством национальной гордости сердца ее соотечественников за рубежом. Советская Армения является маяком надежды для армян, разбросанных по всему свету.

50-летие резни армян в Турции и 45-летие Армянской Советской республики армянский народ встречает в условиях мирного созидательного труда, в дружной могучей семье советских народов, готовых в нужный момент дать решительный отпор всяким попыткам империалистических государств нарушить мирную жизнь нашей страны.